



Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍԻ

3 հունիսի 2011 թվականի N 7

ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷՒՆ՝ Հանձնաժողովի անդամներ՝

Ս. Տեր-Սիմոնյան

Ռ. Մարկոսյան, Գ. Մուրադյան, Ա. Բախշյան, Ֆ. Բերիկյան, Ա. Ղուկասյան, Ռ. Մակարյան, Ա. Օսիկյան, Կ. Արեյան, Ա. Եսայան, Կ. Բեգլարյան, Ա. Զոհրաբյան, Ա. Վարդանյան, Ա. Ղազարյան, Մ. Մարտիրոսյան, Բ. Սարգսյան, Ա. Բեջանյան, Ռ. Լևոնյան, Ա. Եղիազարյան

Հրավիրված էին՝

Ա. Դարբինյան	«Հայաստան» համահայկական հիմնադրամ
Ա. (Տեր-Հովե) Գամաղելյան	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Ն. Հովհաննիսյան	ՀՀ բնապահպանության նախարարություն
Գ. Ալեքանյան	«Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ
Լ. Օհանյան	Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ
Վ. Դավեյան	ՀՀ առողջապահության նախարարություն
Կ. Աղաբաբյան	«Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամ
Բ. Աղամալյան	«Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպություն
Վ. Մարաբյան	«Գաֆեճեան թանգարան» հիմնադրամ
Կ. Պողոսյան	ՀՀ-ում ԼՂՀ-ի մշտական ներկայացուցչություն
Դ. Գրիգորյան Ա. Գասպարյան	«Ղողանջ» սոցիալ-իրավահոգեբանական հասարակական կազմակերպություն
Գ. Կարապետյան	«Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն» հիմնադրամ
Ա. Ղումաշյան Հ. Նասիբյան	«Սեր հայրենիքին» բարեգործական հասարակական կազմակերպություն
Ա. Հակոբջանյան	«Սելվ դը Չիլդրեն Ֆեդերեյշն, ինկ.» ամերիկյան բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ
Գ. Գալստյան	Վերջին օրերի սրբերի բարեգործական կորպորացիայի հայաստանյան ներկայացուցչություն
Ա. Պողոսյան Գ. Մելիքյան	«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների» հիմնադրամ
Գ. Առաքելյան	«Շեն» բարեգործական հասարակական կազմակերպություն

1. «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի Վարդուհաս գյուղի նորակառուց դպրոցի կահավորում» ծրագրի մասին:
(Ա. Դարբինյան, Ս. Տեր-Սիմոնյան)

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Գիշի գյուղի նորակառուց դպրոցի կահավորում» ծրագրի մասին:
(Ա. Դարբինյան, Ս. Տեր-Սիմոնյան)

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

3. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Շիկահող» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 04.03.2011 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2011 թվականի» ծրագրի մասին:
(Ա. Հարությունյան, Ա. Եսայան, Ս. Տեր-Սիմոնյան)

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

4. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Արկիկ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 04.03.2011 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող» ծրագրի մասին:
(Ա. Հարությունյան, Ֆ. Բերիկյան, Ս. Տեր-Սիմոնյան)

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

5. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 12.02.2010 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2011 թվականի» ծրագրի մասին:
(Ա. Հարությունյան, Ս. Տեր-Սիմոնյան)

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

6. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Երեմյան խցերի վերանորոգման» ծրագրի մասին:
(Ա. (Տեր-Հովե) Գամաղելյան, Ա. Եսայան, Ս. Տեր-Սիմոնյան)

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

7. «Գաֆեճեան թանգարան» հիմնադրամի կողմից իրականացվող «Մանուկներին անվճար կրթություն» ծրագրի մասին:
(Վ. Մարաբյան, Կ. Բեգլարյան, Ս. Տեր-Սիմոնյան)

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

8. «Ղողանջ» սոցիալ-իրավահոգեբանական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հագուստի տրամադրում կարիքավոր ընտանիքներին» ծրագրի մասին:
(Դ. Գրիգորյան, Ա. Բախշյան, Կ. Արեյան, Ա. Եսայան, Կ. Բեգլարյան, Ռ. Լևոնյան, Ս. Տեր-Սիմոնյան)

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

5. Հաստատված բարեգործական ծրագրերին հարակից գործարքների մասին
(Ա. Բարխուդարյան)

5.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 13-ի N Մ-315-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հայաստան» համահայկական հիմնադրամ):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

5.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Մատենադարան» հիմնադրամ):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

5.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մարտի 19-ի N Մ-176-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Հրայր և Աննա Հովնաթյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղ):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

5.4 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի մարտի 11-ի N Մ-130-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

6. Այլ հարցեր


6.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 10-ի N Մ-855-Ա որոշման մեջ ու կից ծրագրում փոփոխություններ կատարելու մասին («Հայկական առագաստանավային սպորտի ֆեդերացիա»):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

6.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 22-ի N Մ-261-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին («Մատենադարան» հիմնադրամ):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

ՆԱԽԱՐԱՐ



Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ


27 մայիսի 2011 թվականի N Մ- 352 -Ա
քաղ. երևան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ «ՓՅՈՒՆԻԿ» ՄԻՈՒԹՅՈՒՆ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ
ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2011 թվականի մայիսի 27-ի համաձայնեցման թերթը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է:**

1. Բարեգործական որակել Ֆրանսիայի Սեն Շամոն քաղաքի քաղաքապետ Ֆիլիպ Կիզիրյանի կողմից «Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միություն» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված Renault Master FB30AG3840 մակնիշի միկրոավտոբուսի (նույնականացման համարը VF1FB30AG13384356, 1 տեղ, 2080 կգ ընդհանուր քաշով, 3600 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման և այլ ծախսերը կազմում են 3630 ԱՄՆ-ի դոլար, ԱՄ ՄՁՄ ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

6 հունիսի 2011 թվականի N Մ-353-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-941-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՎՏՈ-
ՄԵՔԵՆԱՅԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2011 թվականի մայիսի 24-ի որոշման նախագծի համաձայնեց-
ման թերթը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**


1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Դիակոնիա» բարեգոր-
ծական հիմնադրամի կողմից իրականացվող «Օժանդակություն Հայաստանի Հանրապե-
տության քաղաքային և գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագրի մասին»
N Մ-941-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 10-րդ կետը լրացնել 5-րդ ենթակետով,
հետևյալ բովանդակությամբ՝

«5. 1999 թվականի արտադրության «Toyota Land Cruiser KJ 95» մակնիշի ավտոմեքե-
նայի ներմուծում՝ 10400 եվրոյին համարժեք դրամ»:

2. Սահմանել, որ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված
«Toyota Land Cruiser KJ 95» մակնիշի ավտոմեքենան (1999 թվականի արտադրության,
թափքի համարը՝ JT111GJ9500112475, 10400 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ,
փոխադրման ծախսերը կազմել են 1750 եվրո) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում
նշված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն աղընթեր պետական եկա-
մուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱԾ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**3 հունիսի 2011 թվականի N Մ-354-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ
ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մայիսի 18-ի N 3/3.8-2/78925-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի մայիսի 17-ի N ՀՔ/22/4190-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մայիսի 16-ի N ԱԱ/3-6/3054-11 եզրակացությունները, **որոշում է.**

1. Բարեգործական որակելի Միացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի (unicef) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով Ազգային ինունականխարգելման ծրագրի շրջանակներում ստացված ներարկիչների և դրանց այրման տուփերի (11 տեղ, 1679 կգ ընդհանուր քաշով, 8483.25 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 650 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռը համապատասխան բուժօգնություններին բաշխելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**3 հունիսի 2011 թվականի N Մ-355-Ա
քաղ. երևան**


**«ՎՈՐՈՂ ՎԻԺՆ ԻՆՅԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՅՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ԾՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾ-
ՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մայիսի 18-ի N 3/3.8-2/78926-11, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2011 թվականի մայիսի 17-ի N ՖԲ/ԱՆՄ-5/4059-11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մայիսի 16-ի N ԱԱ/3-6/3053-11 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով «Վորոլ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (75 տեղ, 5285 կգ ընդհանուր քաշով, 108115 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 7100 ԱՄՆ-ի դոլար (բեռի և բաշխման ցանկը կցվում է), «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-894-Ա, 2010 թվականի փետրվարի 12-ի N Մ-73-Ա և դեկտեմբերի 24-ի NN Մ-931-Ա, Մ-933-Ա, Մ-946-Ա, Մ-947-Ա, Մ-948-Ա, Մ-949-Ա, Մ-950-Ա, Մ-951-Ա, Մ-952-Ա ու Մ-953-Ա որոշումներով հաստատված ծրագրերի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետի և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Գեղարքունիքի, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի և Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ



Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

«Վորոլ Վիժն» ՄԲԿ կողմից C 9550 առ 14.04.2011 հայտարարագրով
ԱՄՆ-ից ստացված

ԲԵՌԻ ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ (ՃԵԿ ԿՈՄՏԵՅՆԵՐ)

Կոմսեյնների համարն է MSCU 870109-2 : Բեռի ընդհանուր արժեքը կազմում է 115 215.00 ԱՄՆ դոլար, որից տրանսպորտային ծախսերը կազմում են 7100.00 ԱՄՆ դոլար, քաշը՝ 5285 կգ, տեղերի քանակը՝ 75:

7/13.11

Քանակ	Զափման միավոր	Նկարագրություն	Քաշը (կգ.քր.)	Գինը (ԱՄՆ դոլար)	Բաշխման վայրը, ՀՀ Կառավարության ԲԾՀՀ որոշումը
150 15 60 250 62 50 300	հատ գույգ հատ հատ հատ հատ հատ	մանկական գործած սվիտեր կոշիկ մանկական ծածկոց շապիկ գունավոր մատիտ գունազարդելու գիրք ծեղքի օձառ		2025.00 1152.30 457.20 4060.00 65.10 135.50 225.00	Մ-948-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Գյումրի քաղաքի և Գյումրի ու Մարմաշեն գյուղերի կարիքավոր բնակչությանը
150 15 60 250 60 300	հատ գույգ հատ հատ հատ հատ	մանկական գործած սվիտեր կոշիկ մանկական ծածկոց շապիկ գունավոր մատիտ ծեղքի օձառ		2025.00 1152.30 457.20 4060.00 63.00 225.00	Մ-950-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում
120 15 50 231 50 48 50 300	հատ գույգ հատ հատ հատ հատ հատ հատ	մանկական գործած սվիտեր կոշիկ մանկական ծածկոց շապիկ գլխարկ գունավոր մատիտ գունազարդելու գիրք ծեղքի օձառ		1620.00 1152.30 381.00 3751.44 224.50 50.40 135.50 225.00	Մ-953-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Վարդենիսի և Ճամբարակի տարածաշրջաններում
90 30 150 48 200	հատ հատ հատ հատ հատ	մանկական գործած սվիտեր մանկական ծածկոց շապիկ գունավոր մատիտ ծեղքի օձառ		1215.00 228.60 2436.00 50.40 150.00	Մ-951-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Ալավերդու տարածաշրջանում
120 15 50 200 50 48 50 300	հատ գույգ հատ հատ հատ հատ հատ իպտ	մանկական գործած սվիտեր կոշիկ մանկական ծածկոց շապիկ գլխարկ գունավոր մատիտ գունազարդելու գիրք ծեղքի օձառ		1620.00 1152.30 381.00 3248.00 224.50 50.40 135.50 225.00	Մ-73-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Կապանի տարածաշրջանում
120 15 50 200 48 50 300	հատ գույգ հատ հատ հատ հատ հատ	մանկական գործած սվիտեր կոշիկ մանկական ծածկոց շապիկ գունավոր մատիտ գունազարդելու գիրք ծեղքի օձառ		1620.00 1152.30 381.00 3248.00 50.40 135.50 225.00	Մ-949-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Միսիանի և Գորիսի տարածաշրջաններում
150	հատ	մանկական գործած սվիտեր		2025.00	Մ-946-Ա

7/13.11

15	զույգ	կոշիկ		1152.30	Բարեգործական
55	հատ	մանկական ծածկոց		419.10	բեռների ներմուծում և
250	հատ	շապիկ		4060.00	անհատույց բաշխում
50	հատ	զվխարկ		224.50	Հայաստանի
48	հատ	գունավոր մատիտ		50.40	Հանրապետության
50	հատ	գունազարդելու գիրք		135.50	Արագածոտնի մարզի
300	հատ	ծեռքի օճառ		225.00	Թալինի
					տարածաշրջանում
120	հատ	մանկական գործած սվիտեր		1620.00	Մ-931-Ա
14	զույգ	կոշիկ		1075.48	Բարեգործական
50	հատ	մանկական ծածկոց		381.00	բեռների ներմուծում և
200	հատ	շապիկ		3248.00	անհատույց բաշխում
48	հատ	գունավոր մատիտ		50.40	Գավառի
40	հատ	գունազարդելու գիրք		108.40	տարածաշրջանում
200	հատ	ծեռքի օճառ		150.00	
127	հատ	մանկական գործած սվիտեր		1714.50	Մ-952-Ա
15	զույգ	կոշիկ		1152.30	Բարեգործական
60	հատ	մանկական ծածկոց		457.20	բեռների ներմուծում և
250	հատ	շապիկ		4060.00	անհատույց բաշխում
50	հատ	զվխարկ		224.50	Ստեփանավանի
48	հատ	գունավոր մատիտ		50.40	տարածաշրջանում
50	հատ	գունազարդելու գիրք		135.50	
300	հատ	ծեռքի օճառ		225.00	
90	հատ	մանկական գործած սվիտեր		1215.00	Մ-894-Ա
30	հատ	մանկական ծածկոց		228.60	Բարեգործական
150	հատ	շապիկ		2436.00	բեռների ներմուծում և
48	հատ	գունավոր մատիտ		50.40	անհատույց բաշխում
218	հատ	ծեռքի օճառ		163.50	Երեվանի Բանաբեր- Ջեթրուն վարչական շրջանում
49	հատ	բժշկական սալակ		2130.94	Մ-947-Ա
143	հատ	սպասք լվանալու հեղուկ 3.79լ.		3538.82	Բարեգործական
462	հատ	ծեռնափայտ		3703.25	բեռների ներմուծում և
2	հատ	մետաղյա ապակեպատ պահարան		1254.11	անհատույց բաշխում
32	զույգ	հենակ		771.94	Առողջապահական
144	հատ	պլաստմասե գիշերաման		756.03	Հաստատությունների
594	հատ	պլաստմասե տարա		1537.49	
11	հատ	պլաստմասե աղբաման		68.80	
3	հատ	բժշկական աթոռ		179.24	
1140	հատ	շնչառական դիմակ		1779.26	
408	հատ	հիգիենիկ տակդիր		203.42	
144	հատ	բժշկական գուլպա		450.80	
79	հատ	բժշկական էլեկտրոդ		383.55	
3	հատ	բժշկական համակարգի տակդիր		63.12	
199	հատ	ստետոսկոպ		4221.49	
4006	հատ	պոլիէթիլենային տոպրակ		673.21	
2300	հատ	բժշկական ձեռնոց (ոչ ստերիլ)		177.12	
300	զույգ	բժշկական ձեռնոց (ստերիլ)		25.03	
98	հատ	էլաստիկ բանդաժ		194.74	
70	հատ	թղթե խալաթ		750.12	
60	հատ	վազինալ սպեկուլա		248.09	
30	հատ	ամեստեզ խողովակ		62.07	
2000	հատ	ապակե պիպետակա		1247.21	
4800	հատ	թղթե թևկապ		202.74	
500	հատ	թղթե զվխարկ		4317.11	
1150	հատ	աչքի վիրակապ		1389.40	
445	հատ	խողովակ		849.49	
67	հատ	թանգիլե տամպոն		120.71	

7/13.11

450	հատ	կաչող թուղթ		364.37	
217	հատ	բինտ		158.12	
237	հատ	նորածնի շապիկ		915.80	
10	հատ	բժշկական մանժետ		98.19	
2400	հատ	պլաստմասե պիպետակա		2162.78	
24	հատ	սառեցնող փաթեթ		96.71	
20	հատ	դրապ		99.03	
12	հատ	ֆիկսատոր		230.68	
772	հատ	բժշկական ասեղ		123.37	
1	հատ	կշեռք		68.80	
12	կոմպլ	նորածնի կոմպլեկտ		150.85	
383	կոմպլ	հիգիենիկ կոմպլեկտ		3619.99	
117	կոմպլ	բժշկական հավաքածու		7216.39	
		ԸՆԴԱՄԵՆԸ	5285.00	115 215.00	



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**3 հունիսի 2011 թվականի N Մ-356-Ա
քաղ. երևան**


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-947-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԾՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մայիսի 27-ի N 3/3.8-2/79425-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի մայիսի 30-ի N ՀԴ/22/4667-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն աղընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մայիսի 30-ի N ԱԱ/3-6/3484-11 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից ուղարկված բժշկական պարագաները (20 տեղ, 4900 կգ ընդհանուր քաշով, 151021.79 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 7375 ԱՄՆ-ի դոլար, ցանկը կցվում է, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում առողջապահական հաստատություններին» ծրագրի մասին» N Մ-947-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն աղընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետի և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, մյուսիքի ու Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ




Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

7/13.18

«Վորլդ Վիժն» ՄԲԿ կողմից C 13578 առ 17.05.2011 հայտարարագրով
ԱՄՆ-ից ստացված
ԲԵՌԻ ԲԱՇԽԱՄԱՆ ՑՈՒՑԱԿ (մեկ կոնտեյներ)

Կոնտեյների համարն է MAEU 636268-4 : Բեռի ընդհանուր արժեքը կազմում է 158396.79 ԱՄՆ դոլար, որից տրանսպորտային ծախսերը կազմում են 7375.00 ԱՄՆ դոլար, քաշը՝ 4900 կգ, տեղերի քանակը՝ 20:

Քանակ	Չափման միավոր	Նկարագրություն	Քաշը (կգ.բր.)	Գինը (ԱՄՆ դոլար)	Բաշխման վայրը, ԳԳ Կառավարության ԲԾԳԳ որոշումը
936	հատ	Բինո		2075.18	Մ-947-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Առողջապահական հաստատություններին
164	հատ	Սավան		5633.24	
950	հատ	Թղթե գլխարկ		470.54	
1500	հատ	Պլաստիկ պիպետկա		159.02	
4	զույգ	Յենակ		102.51	
60	հատ	Սրբիչ		149.10	
2880	հատ	Սանր		3016.60	
93	հատ	Բժշկական էլեկտրոդ		585.52	
17000	հատ	Պլաստմասե սրվակ		2740.52	
64	հատ	Տպելու թուղթ		183.66	
3500	հատ	Պլաստմասե վակուումային սրվակ		1338.11	
200	հատ	Փայտիկ յողացված բամբակով		218.02	
49	հատ	Բժշկական մատիտ		475.52	
3800	հատ	Յիգիենիկ տակաշոր		9570.83	
191	հատ	Թանգիվե տամպոն		255.13	
135	հատ	Յեղուկ օճառ		1323.41	
300	հատ	Խողովակ		463.81	
15644	հատ	Բժշկական ձեռնոց /ոչ ստերիլ/		3814.90	
2550	զույգ	Բժշկական ձեռնոց /ստերիլ/		980.95	
11146	հատ	Անձեռոցիկ		2934.99	
20	կոմպլ	Բժշկական հավաքածու		610.14	
1923	հատ	Վիրակապ		2161.60	
3005	հատ	Թղթե սավան		4309.07	
1162	հատ	Թղթե խալաթ		4388.41	
5944	հատ	Պոլիէթիլենային տոպրակ		2329.76	
1398	հատ	Փոխանցիչ		377.04	
121123	հատ	Բժշկական ասեղ		21164.54	
3589	հատ	Պլաստմասե տարա		3486.04	
989	հատ	Էլաստիկ բանդաժ		4224.55	
590	հատ	Կատետր		796.54	
14953	հատ	Ներարկիչ		3051.08	
120	հատ	Ներարուժական թել		555.01	
45285	հատ	Թղթե ծածկոց		64937.15	
834	հատ	Թղթե ժապավեն		4882.16	
488	հատ	Դեզադոր		524.54	
96	հատ	Բժշկական գուլպա		161.55	
474	հատ	Մաշկի կոբեմ		1577.88	
11100	հատ	Թղթե տոպրակ		2183.98	
100	հատ	Թղթե շորտ		184.19	
		ԸՆԴԱՄԵՆԸ	4900	158396.79	





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 հունիսի 2011 թվականի N Մ-357-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 21-Ի N Մ-001-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱ-
ԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2011 թվականի մայիսի 27-ի N 3/3.8-1/79410-11 և Հայաստանի Հանրապետության կառավարու-
թյանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մայիսի 27-ի N ԱԱ/3-4/3434-11
եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**


1. Սահմանել, որ Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնա-
դրամի կողմից (քաղ. երևան, Ազատության 26, ՀՎՀՀ՝ 00040233) կնքված՝ ստորև նշված՝
պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնա-
ժողովի 2011 թվականի հունվարի 21-ի «Գիտության և առաջատար տեխնոլոգիաների
ազգային հիմնադրամի կողմից իրականացվող «2011-2012 թվականների ընթացքում
Հայաստանի Հանրապետության գիտական ենթակառուցյունների պահպանում և հետագա
զարգացման աջակցություն» ծրագրի մասին» N Մ-001-Ա որոշմամբ հաստատված ծրագրի
իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ՍԱԳԱ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01502986) 2011 թվականի մայիսի 2-ին կնքված՝
N 270411-36-1-SASP պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սառնարանի
ծեղքերում՝ 183333 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Մեդիսար» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02555635) 2011 թվականի մայիսի 5-ին կնքված՝
N 040511-ECSP-10-07/L-GRASP պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է
լաբորատոր պարագաների և նյութերի ձեռքբերում՝ 49750 դրամի չափով, առանց ավելաց-
ված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 հունիսի 2011 թվականի N Մ-358-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 19-Ի N Մ-176-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղ)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2011 թվականի մայիսի 27-ի N 3/3.8-1/79408-11 և Հայաստանի Հանրապետության կառավարու-
թյանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մայիսի 27-ի N ԱԱ/3-4/3433-11
եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնա-
ճյուղի կողմից (քաղ. Երևան, Թամանյան 2ա, բն. 2, ՀՎՀՀ՝ 01555988) կնքված՝ ստորև
նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնա-
ժողովի 2010 թվականի մարտի 19-ի «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորա-
ցիայի մասնաճյուղի կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-176-Ա որոշմամբ
հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ռադվան տեխնոլոգիա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01835789) 2011 թվականի ապրիլի
6-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարության
որակի և տեխնիկական հսկողության աշխատանքների իրականացում՝ 7408800 դրամի
չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար-
ություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**3 հունիսի 2011 թվականի N Մ-359-Ա
քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ
ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 3)**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի ապրիլի 19-ի N 3/3.8-2/77730-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի ապրիլի 20-ի N ՀՔ/22/3165-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի ապրիլի 22-ի N ԱԱ/3-6/2442-11 և հունիսի 1-ի N ԱԱ/3-6/3549-11 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել Միացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի (unicef) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ստացված պատվաստանյութի (25 տեղ, 1138.97 կգ ընդհանուր քաշով, 334530 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 5701.36 ԱՄՆ-ի դոլար, «Չվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռը համապատասխան բուժհաստատություններին բաշխելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**3 հունիսի 2011 թվականի N Մ-360-Ա
քաղ. երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱԽՄԱՏԻ ԱԿԱԴԵՄԻԱ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ
ՍՏԱՅՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հունիսի 2-ի N 3/3.8-2/79723-11, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2011 թվականի հունիսի 1-ի N 03/07-1/5722-11, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2011 թվականի հունիսի 1-ի N 1/06/492-11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մայիսի 31-ի N ԱԱ/3-6/3537-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Բարեգործական որակել Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության միջոցներով Հայաստանի հանրակրթական դպրոցների շախմատի օլիմպիադայի կազմակերպման նպատակով «Հայաստանի շախմատի ակադեմիա» հիմնադրամի հասցեով ուղարկված 122 շախմատի ժամացույցի (2 տեղ, 60 կգ ընդհանուր քաշով, 1952 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 210 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՍՏ) ներմուծման և Հայաստանի շախմատի ֆեդերացիային անհատույց հանձնման ծրագիրը:

2. «Հայաստանի շախմատի ակադեմիա» հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱԿ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**3 հունիսի 2011 թվականի N Մ-361-Ա
քաղ. երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈՒԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ
Մ Ա Ս Ի Ն**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հունիսի 2-ի N 3/3.8-2/79719-11, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2011 թվականի հունիսի 1-ի N 1/06/491-11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հունիսի 1-ի N ԱԱ/3-6/3562-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել Եվրոպայի ֆուտբոլի ասոցիացիաների միության (UEFA) կողմից որպես օժանդակություն Հայաստանի ֆուտբոլի ազգային հավաքականների համար «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության հասցեով ուղարկված մարզահագուստի դրոշմանիշերի (մեկ տեղ, 4.1 կգ ընդհանուր քաշով, 1840 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 115 եվրո, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**3 հունիսի 2011 թվականի N Մ-362-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 19-Ի N Մ-176-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿ-
ՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մայիսի 31-ի N 3/3.8-2/79557-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հունիսի 1-ի N ԱԱ/3-6/3559-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղի կողմից ձեռք բերված ամրանները (64 տեղ, 276180 կգ ընդհանուր քաշով, 87968000 դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մարտի 19-ի «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղի կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-176-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱԸ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**3 հունիսի 2011 թվականի N Մ-363-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 19-Ի N Մ-176-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

(«Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2011 թվականի հունիսի 1-ի N 3/3.8-1/79605-11 և Հայաստանի Հանրապետության կառավարու-
թյանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մայիսի 30-ի N ԱԱ/3-4/3462-11
եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.***


1. Սահմանել, որ «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնա-
ճյուղի կողմից (քաղ. Երևան, Թամանյան 2ա, բն. 2, ՀՎՀՀ՝ 01555988) կնքված՝ ստորև
նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են
Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովի 2010 թվականի մարտի 19-ի «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն»
կորպորացիայի մասնաճյուղի կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-176-Ա որոշմամբ
հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Նելանդ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00444653) 2011 թվականի մայիսի 6-ին կնքված՝
N 05-11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինությունների առանցք-
ների նշահարման աշխատանքների իրականացում՝ 84000 դրամի չափով, առանց ավելաց-
ված արժեքի հարկի:

2) «Վեկս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01525774) 2011 թվականի մայիսի 24-ին կնքված
պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է փայտյա սեղանի պատրաստում՝
165000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար-
ություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 հունիսի 2011 թվականի N Մ-364-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 11-Ի N Մ-130-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2011 թվականի հունիսի 1-ի N 3/3.8-1/79609-11 և Հայաստանի Հանրապետության կառավարու-
թյանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մայիսի 30-ի N ԱԱ/3-4/3461-11
եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**


1. Սահմանել, որ «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմա-
կերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 02528755) կնքված՝ ստորև նշված
պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնա-
ժողովի 2011 թվականի մարտի 11-ի «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգոր-
ծական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից Հայաստանի Հանրապե-
տության Սյունիքի մարզի Կապանի տարածաշրջանում իրականացվող ծրագրի մասին»
N Մ-130-Ա որոշմամբ (2011 թվականի մայիսի 13-ի N Մ-298-Ա որոշման խմբագրությամբ)
հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Երիցվանք» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09405726) 2011 թվականի մայիսի 10-ին կնքված՝
N WVA/KAP ADP/PG-11/001 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է
խաղահրապարակի կառուցման աշխատանքների իրականացում՝ 7834064 դրամի չափով,
առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Լիաքար» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09412694) 2011 թվականի մայիսի 13-ին կնքված՝
N WVA/KAP ADP/CM-11/004 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինա-
րարական նյութերի մատակարարում՝ 6785374 դրամի չափով, առանց ավելացված արժեքի
հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար-
ություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**3 հունիսի 2011 թվականի N Մ-365-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N Մ-855-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(«Հայկական առազաստանավային սպորտի ֆեդերացիա» ՀԿ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Հայկական առազաստանավային սպորտի ֆեդերացիա»
հասարակական կազմակերպության 2011 թվականի մայիսի 31-ի N 25/3 գրությունը, որոշում է.*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 10-ի «Հայկական առազաստանավային սպորտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Երազանքի առազաստանավեր» ծրագրի մասին» N Մ-855-Ա որոշման մեջ և կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «24000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք» բառերը փոխարինել «18311 ԱՄՆ-ի դոլարին համարժեք» բառերով.


2) որոշման 2-րդ կետում «(24000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 6000 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը)» բառերը փոխարինել «(14834.16 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ, փոխադրման ծախսերը կազմել են 3476.85 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ)» բառերով.

3) կից ծրագրի 6-րդ կետում «24000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք» բառերը փոխարինել «18311 ԱՄՆ-ի դոլարին համարժեք» բառերով.

4) կից ծրագրի 9-րդ և 10-րդ կետերում «1 նավի արժեքը 1500 ԱՄՆ-ի դոլար» բառերը փոխարինել «1 նավի արժեքը 1236.18 ԱՄՆ-ի դոլար» և «փոխադրում՝ 1 նավի փոխադրման արժեքը 500 ԱՄՆ-ի դոլար» բառերը՝ «փոխադրման ընդհանուր ծախսերը 3476.85 ԱՄՆ-ի դոլար» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ Մ Ա Մ

**6 հունիսի 2011 թվականի N Մ-366-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ
13-Ի N Մ-299-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2011 թվականի մայիսի 31-ի որոշման նախագծի համաձայնեցման թերթը, որոշում է:

1. Սահմանել, որ սիրիահայ բարերար Կաբրիել Ուհանեսի Ղենբերջիի միջոցով «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի հասցեով ուղարկված ներքոհիշյալ բեռները ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 13-ի «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծման և անհատույց բաշխման» ծրագրի մասին» N Մ-299-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում՝

1) «Volkswagen LT28» մակնիշի շտապ օգնության ավտոմեքենա՝ 2005 թվականի արտադրության, նույնականացման համարը՝ WV1ZZZ2DZ5H026794, 7300 եվրո արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 600 եվրո.

2) «Volkswagen T5» մակնիշի շտապ օգնության ավտոմեքենա՝ 2006 թվականի արտադրության, նույնականացման համարը՝ WV2ZZZ7HZ6H033573, 9300 եվրո արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 600 եվրո.

3) «Volkswagen T5» մակնիշի շտապ օգնության ավտոմեքենա՝ 2007 թվականի արտադրության, նույնականացման համարը՝ WV2ZZZ7HZ7H096212, 8600 եվրո արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 600 եվրո.

4) 100 համակարգիչ՝ 205 տեղ, 1284 կգ ընդհանուր քաշով, 40180 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 695 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏԿ:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն աղընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
3 հունիսի 2011 թվականի N Մ-
քաղ. երևան 367 -Ա

«ԳՈՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱ-
ԴՐԱՄ»-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ԲԱՀՆԱՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մայիսի 31-ի N 3/3.8-1/79556-11, Հայաստանի Հանրապետության աշխարհային և սոցիալական հարցերի նախարարության 2011 թվականի մայիսի 30-ի N ՖԲ/ԱնՄ-1/4636-11 ու Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հունիսի 1-ի N ԱԱ/3-6/3548-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակելի Ամերիկայի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից «Գորգեն Մելիքյանի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»-ի հասցեով ստացված բեռի (155 տեղ խառը ապրանք և 1 տեղ Դոջ պիկաս 2003 թվականի արտադրության ավտոմեքենա, նույնականացման համար՝ 1D7HA18N33S141178, 5088 կգ ընդհանուր քաշով, 76779 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 7850 ԱՄՆ-ի դոլար, բաշխման ցանկը կցվում է, «Արարտյան» տարածաշրջանային մաքսատուն և ԱՄ ՄՁՄ ՄՏ) ներմուծման և բաշխման ծրագիրը:

2. «Գորգեն Մելիքյանի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարու-
թյուն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱԿ



Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ


21 7/4. 7

«Գորգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների
հիմնադրամի» անունով «Հայկական միացյալ հիմնադրամի» կողմից
ուղարկված 156 տեղ 5088 կգ բրուտտո քաշով և 76 779 ԱՄՆ դոլար
արժողությամբ

(Ճանապարհածախսը 7850 ԱՄՆ դոլար) բեռի բաշխման

ՑԱՆԿ

h/h	Ապրանքի անվանումը	տեղ	քաշ բրուտտո կգ	արժեք \$	հատ	ԼԳՅ Քաշաթաղի սոցապ վարչություն	ԼԳՅ Ստեփանակերտի «Արփեն» մայր և նորածին կենտրոն	«Գ.Մելիքյանի՝ Քաշաթաղի շրջ.բազմազավակ ընտանիքների հիմնադրամ	ԵՊԳ
1.	Ավտոմեքենա DODG պիկաս 2003թ.	1	2385	10685				1	
2.	Գործիքների արկղ	2	50	1075				2	
3.	Ավտոմեքենայի ծայնային համակարգ	1	5	240				1	
4.	Խաղողի կտի յուղ	1	27	144			1		
5.	Մեծահասակի տակաշոր	2	24	450			2		
6.	Ֆուտբոլի պարագաներ	3	48	600		3			
7.	Գիրք	21	415	4500					21
8.	Անկողնու ներքնակ և ծածկոց	2	14	390		2			
9.	Շամբարային վրան և պարագաներ*	-	*	310	*	*			
10.	Խաղալիք*	-	*	60	*	*			
11.	Կանացի պայուսակ*	-	*	80	*	*			
12.	Ղարոցական պարագաներ	1	6	520		1			
13.	Անկողնու պարագաներ և սավան *	-	*	1280	*	*			
14.	Օգտագործված հագուստ	122	2114	56445		60	62		
	ԸՆԴԱՄՈՒՆՆԵՐ	156	5088	76779					





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 հունիսի 2011 թվականի N Մ-368 -Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի N Մ-442-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (3)


(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հունիսի 3-ի N 3/3.8-2/79784-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի հունիսի 2-ի N ԿԴ/22/4891-11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մայիսի 31-ի N ԱԱ/3-6/3538-11 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ Միացյալ հայկական հիմնադրամի կողմից Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի հասցեով ուղարկված բեռը (16 տեղ, 317 կգ ընդհանուր քաշով, 7770.83 ԱՄՆ-ի դոլար ընդհանուր արժողությամբ, իսկ բեռնափոխադրման ծախսերը կազմում են 2398.10 եվրո, Ջվարթնոց Մ/Տ) ներմուծվում է «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 20-ի «Հայ ավետարանչական ընկերակցության հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեկեցիկ պայմաններ» N Մ-442-Ա որոշմամբ (2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-280-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին:

ՆԱԽԱԳԱԿ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 հունիսի 2011 թվականի N Մ-369-ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի N Մ-442-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (2)

(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մայիսի 19-ի N 3/3.8-2/79088-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մայիսի 19-ի N ԱԱ/3-6/3234-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ Միացյալ հայկական հիմնադրամի կողմից Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի հասցեով ուղարկված բեռը (1 տեղ, 323.4 կգ ընդհանուր քաշով, 6854.66 եվրո ընդհանուր արժողությամբ, իսկ բեռնափոխադրման ծախսերը կազմում են 662982 դրամ «Ձվարթնոց» Մ/Տ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 20-ի «Հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեկեցիկ պայմաններ» N Մ-442-Ա որոշմամբ (2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-280-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱԸ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 հունիսի 2011 թվականի N Մ-370-Ա

քաղ. Երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 20-Ի N Մ-442-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (1)

(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հունիսի 1-ի N 3/3.8-2/79576-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մայիսի 30-ի N ԱԱ/3-6/3447-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ Միացյալ հայկական հիմնադրամի կողմից Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի հասցեով ուղարկված բեռը (210 տեղ, 3285 կգ ընդհանուր քաշով, 73740 ԱՄՆ-ի դոլար ընդհանուր արժողությամբ, որից բեռնափոխադրման ծախսերը կազմում են 6450 ԱՄՆ-ի դոլար, Արարատյան Տ/Մ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 20-ի «Հայ ավետարանչական ընկերակցության հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեկեցիկ պայմաններ» N Մ-442-Ա որոշմամբ (2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-280-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Լոռու, Սյունիքի մարզպետներին ու Երևանի քաղաքապետին:



ՆԱԽԱԳԱԿ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 հունիսի 2011 թվականի N Մ - 371 - Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008
ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի N Մ-645-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱ-
ԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՇԵՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մայիսի 26-ի N 3/3.8-1/79298-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մայիսի 26-ի N ԱԱ/3-4/3374 -11 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**


1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հոկտեմբերի 6-ի «ՇԵՆ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2009-2013 թվականներին իրականացվող «Խմելու և ոռոգման ջրի համակարգի բարելավում» ծրագրի մասին» N Մ-645-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 5-րդ կետը լրացնել «Տավուշի մարզի Այգեպար գյուղ» բառերով:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «ՇԵՆ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արփինե-Գոռ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05011827) 2011 թվականի մայիսի 6-ին կնքված՝ N SH-TV 015 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գրատարի կառուցում և տարածքի ցանկապատում՝ 2173103 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 հունիսի 2011 թվականի N Մ - 372 - Ա
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N Մ-403-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ»
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մայիսի 20-ի N 3/3.8-1/79118-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մայիսի 19-ի N ԱԱ/3-4/3204-11 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյումրի, Իջևան քաղաքներում և Երևանի Քանաքեռ-Զեյթուն ու Արաբկիր համայնքներում ընտանիքների ամրապնդում և մանկալքության կանխարգելում» ծրագրի մասին» N Մ-403-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հայկական Կարմիր խաչի ընկերություն» հասարակական կազմակերպության հետ (ՀՎՀՀ՝ 00006023) 2011 թվականի մայիսի 2-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացների անցկացում՝ 1089000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
3 հունիսի 2011 թվականի N Մ-
քաղ. Երևան 373 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-935-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (ՍԻ. Օ. ԷՅ. ԷՖ. ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մայիսի 25-ի N 3/3.8-1/79229-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մայիսի 23-ի N ԱԱ/3-4/331-11 գրությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Սի. Օ. ԷՅ. ԷՖ.» մանուկների բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Սի. Օ. ԷՅ. ԷՖ.» մանուկների բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-935-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Էվրի Դեյ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09104669) 2009 թվականի հունիսի 1-ին կնքված՝ N J1540-09 պայմանագրում (2011 թվականի մայիսի 10-ին կնքված՝ N Հ149 փոփոխման համաձայնագրի խմբագրությամբ) նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի մայիսի 10-ից մինչև դեկտեմբերի 31-ը «Բյուրեղ» ջրի մատակարարում՝ 500000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱԿ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
3 հունիսի 2011 թվականի N Մ - 374-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 4-Ի N Մ-317-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՁԵՌՔԵՐՄԱՆ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մայիսի 20-ի N 3/3.8-2/79105-11 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մայիսի 19-ի N ԱԱ/3-6/3235-11 եզրակացությունները,
ո Ր Ո Շ ՈՒ Մ Է:


1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից ձեռք բերված փրկարարական ծառայության պարագաները (4 տեղ, 36 կգ ընդհանուր քաշով, 220230 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 10000 ռուսական ռուբլի, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվել են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 4-ի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Կառուցենք անվտանգ տեղական համայնքներ Հարավային Կովկասում» ծրագրի մասին» N Մ-317-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կետիկյան և գործընկերներ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01526862) 2011 թվականի ապրիլի 15-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է փրկարարական

գույքի մատակարարման հետ կապված միջնորդավճար՝ 1256920.7 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի և Հ Շիրակի մարզպետարան:



Ա.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 հունիսի 2011 թվականի N Մ - 375 - Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՍԻ 13-Ի N Մ-316-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մայիսի 30-ի N 3/3.8-1/79508-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մայիսի 30-ի N ԱԱ/3-4/3463-11 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 13-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Երևան քաղաքի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնի դիալիզի և նեֆրոլոգիայի բաժանմունքի վերանորոգման նախագծում» ծրագրի մասին» N Մ-316-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02524943) 2011 թվականի մայիսի 12-ին կնքված՝ N Փ-01/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննություն՝ 98000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱՐԱՐ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
3 հունիսի 2011 թվականի N Մ- 376 -Ա
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ MA*TI 11-Ի N Մ-173-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հաշվի առնելով «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի տնօրենի 2011 թվականի մայիսի 13-ի գրությունը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ** է:

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի մարտի 11-ի «Հայաստանի Հանրապետության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի փետրվարի 12-ի N Մ-39-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի)» N Մ-173-Ա որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետում «2011 թվականի հունվարի 14-ին կնքված՝ N 7-42» բառերը փոխարինել «2009 թվականի նոյեմբերի 10-ին կնքված՝ N 8349» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳՎ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՅՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
3 հունիսի 2011 թվականի N Մ - 377 - Ա
քաղ. երևան

«ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԻՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԱԿ
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՅԵՌՎ ՍՏԱԳՎԱԾ ԲԵՌԻ
ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մայիսի 30-ի N 3/3.8-2/79500-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի մայիսի 31-ի N Հ/722/4747-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մայիսի 27-ի N 3/3-6/3423-11 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել Ֆրանսիայի Մարսել քաղաքից՝ «HOPITAL ASSISTANCE» բարեգործական կազմակերպության կողմից աջակցության նպատակով «Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված բեռի (754 տեղ, 7080 կգ ընդհանուր քաշով, 5000 եվրո արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 3481.8 եվրո, բեռի ցանկը կցվում է, «Արարատյան» ՏՍ) ներմուծման ծրագիրը:

2. «Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշման ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Ա Ր Զ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Համաձայն ՀՀ ՍՕ N132 հոդվածի 1-ին կետի կատարեցինք «Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» ՓԲԸ-ի անունով N2011/33/18294 առ 09.05.2011թ. փ/ա-ով ստացված բեռի նախնական գնում և հաշվարկ, որի արդյունքում պարզվեց, որ բեռի մեջ առկա են հետևյալ ապրանքատեսակները, որի համար պատասխանատվություն ենք կրում:

Ց ՈՒ Ց Ա Կ

20.7/4.2

Դ/հ	Ապրանքի անվանումը	Չափ. միավ.	Քանակը	Գինը	Գինը /EUR/	Քաշը /կգ/
1.	շտատիվ	h	20	20	400	50
2.	վիրահատական սեղան	h	2	5	10	500
3.	թախքա	h	3	10	30	180
4.	աթոռ անցքով	h	7	2	14	35
5.	աթոռ	h	8	5	40	200
6.	սեղանիկ	h	5	2	10	100
7.	փոքր պահարան	h	1	2	2	38
8.	նստարան 3 տեղ	h	1	25	25	100
9.	նստարան 1 տեղ	h	15	10	150	300
10.	սայլակ	h	1	5	5	30
11.	ցենտրիֆուգա	h	3	20	60	200
12.	մահճակալ ֆունկցիոնալ	h	4	30	120	550
13.	մահճակալ երկաթյա	h	12	20	240	1250
14.	մահճակալի էլ. վահանակ	h	1	4	4	2
15.	գրասենյակային սեղան	h	1	10	10	50
16.	համակարգչի սեղան	h	1	2	2	20
17.	միանգամյա օգտագործման բժշկ. պարակա	h	350	2	700	700
18.	միանգամյա օգտագործման բժշկ. պարակա	h	220	3	660	600
19.	օգտագործված արտահագուստ	տուփ	20	1,5	30	200
20.	գլյուկոզա -5A% 57 հատ	տուփ	4	3	12	20
21.	սողայի քլորիդ - 0,9% 357 հատ	տուփ	4	3	12	20
22.	պերֆալգան /պարացետամոլ/ 116 հատ	տուփ	2	3	6	5
23.	քայլակ	h	11	8	88	5
24.	հենակ	h	14	10	140	10
25.	էլեկտրոկարդիոգրաֆ	h	2	50	100	50
26.	վիրահատական լույս	h	1	5	5	50
27.	արյան մեջ շաքար որոշող սարք	h	10	11	110	10
28.	համակարգչային տոմոգրաֆիկ տպիչ	h	1	20	20	500
29.	մոնիտոր	h	1	5	5	5
30.	ժապավեն	h	8	8	64	40
31.	շնչառական սարք	h	4	350	1400	300
32.	շնչառական սարքի դետալ	h	4	4	16	30
33.	էլեկտրոկարդիոգրաֆ	h	1	2	2	100
34.	չիրմա	h	4	2	8	10
35.	թոքերի շնչող սարք	h	1	20	20	20
36.	արյուն պահող պահարան	h	1	40	40	100
37.	հիվանդանոցային օգտագործած խոհանոցային կահույք	h-ծու	1	50	50	500
38.	ագոտի դատարկ բալոն		3	50	150	100
39.	միկրոսկոպ		2	120	240	100
ԸՆդամենը՝			54		5000	7080

«Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» ՓԲԸ
լիազորված անձ՝
Վ.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
3 հունիսի 2011 թվականի N Մ-378-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-029-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«Արմենակ և Աննա Թաղէոսյանների անվամբ բուժարան» բարեգործական
հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մայիսի 25-ի N 3/3.8-1/79234-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մայիսի 23-ի N ԱԱ/3-4/3297-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ** է.

1. Սահմանել, որ «Արմենակ և Աննա Թաղէոսյանների անվամբ բուժարան» բարեգործական հիմնադրամի կողմից (քաղ. երևան, Ե. Կողբացու 28, 72, ՀՎՀՀ՝ 02592526) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունվարի 27-ի «Արմենակ և Աննա Թաղէոսյանների անվամբ բուժարան» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Կոշ գյուղում պոլիկլինիկայի կառուցում» ծրագրի մասին» N Մ-029-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պոժտեխնիկա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01013653) 2011 թվականի մայիսի 13-ի N 25-Ա փոխանցման հաշվում նշված գործարքը, որով նախատեսվում է հակահրդեհային զույքի և պարագաների ձեռքբերման աշխատանքների իրականացում՝ 499.835 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**3 հունիսի 2011 թվականի N Մ - 379 - Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008
ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի N Մ-644-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՇԵՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մայիսի 26-ի N 3/3.8-1/79302-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն աղընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մայիսի 25-ի N ԱԱ/3-4/3377 -11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հոկտեմբերի 6-ի «ՇԵՆ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2009-2013 թվականներին իրականացվող «Օգնություն դպրոցներին և մանկապարտեզներին» ծրագրի մասին» N Մ-644-Ա (2010 թվականի հուլիսի 23-ի N Մ-466-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի 5-րդ կետը լրացնել «Շիրակի մարզի Մեղրաշատ, Լոռու մարզի Շահումյան և Արմավիրի մարզի Մյասնիկայն գյուղեր» բառերով:


2. Սահմանել, որ «ՇԵՆ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Սպառչինարդ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00410971) 2011 թվականի ապրիլի 28-ին կնքված՝ N SH-SH 009 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ՀՀ Շիրակի մարզի Մեղրաշատի համայնքային կենտրոնի վերանորոգում՝ 799986 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Կանակա» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06901369) 2011 թվականի ապրիլի 26-ին կնքված՝ N SH-LR 006 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ՀՀ Լոռու մարզի Շահումյանի համայնքային կենտրոնի վերանորոգում՝ 1851385 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Կանակա» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06901369) 2011 թվականի մայիսի 6-ին կնքված՝ N SH-AR 001 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ՀՀ Արմավիրի մարզի Մյասնիկայնի դպրոցի մարզադահլիճի վերանորոգում՝ 1999179 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն աղընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արմավիրի, Լոռու ու Շիրակի մարզպետներին:



Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 հունիսի 2011 թվականի N Մ - 380 - Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2008
ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի N Մ-644-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՇԵՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մայիսի 20-ի N 3/3.8-1/79119-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մայիսի 19 -ի N ԱԱ/3-4/3203 -11 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հոկտեմբերի 6-ի «ՇԵՆ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2009-2013 թվականներին իրականացվող «Օգնություն դպրոցներին և մանկապարտեզներին» ծրագրի մասին» N Մ-644-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 5-րդ կետը լրացնել «Արագածոտնի մարզի Արտենի գյուղ» բառերով:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «ՇԵՆ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Օհանջանյան և ընկերներ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06107704) 2011 թվականի մայիսի 11-ին կնքված՝ N 11.05.11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պետալրալաստե դռների, պատուհանների և պատուհանագոգերի մատակարարում՝ 1439150 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
3 հունիսի 2011 թվականի N Մ - 381 - Ա
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008
ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի N Մ-644-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՇԵՆ» ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մայիսի 26-ի N 3/3.8-1/79300-11 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մայիսի 25-ի N ԱԱ/3-4/3376-11 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «ՇԵՆ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հոկտեմբերի 6-ի «ՇԵՆ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2009-2013 թվականներին իրականացվող «Օգնություն դպրոցներին և մանկապարտեզներին» ծրագրի մասին» N Մ-644-Ա (2010 թվականի օգոստոսի 20-ի N Մ-534-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Սպորտ Սիթի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02590297) 2011 թվականի մայիսի 16-ին կնքված՝ N 16-1/05/11-ՕԱ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Վայոց Ձորի մարզի Մալիշկայի համայնքային մարզադահլիճի կահավորման համար պրանքների մատակարարում՝ 3547500 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2) «Սպորտ Սիթի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02590297) 2011 թվականի մայիսի 16-ին կնքված՝ N 16-2/05/11-ՕԱ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Այունիքի մարզի Դավիթ-Բեկի դպրոցի մարզադահլիճի կահավորման համար ապրանքների մատակարարում՝ 1184167 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի ու Այունիքի մարզպետներին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Յիունիսի 2011 թվականի N Մ - 382 - Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008
ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի N Մ-644-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՇԵՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մայիսի 17-ի N 3/3.8-1/78921-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մայիսի 16-ի N ԱԱ/3-4/3078 -11 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «ՇԵՆ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հոկտեմբերի 6-ի «ՇԵՆ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2009-2013 թվականներին իրականացվող «Օգնություն դարձնելու և մանկապարտեզների» ծրագրի մասին» N Մ-644-Ա (2009 թվականի նոյեմբերի 20-ի N Մ-788-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Միկա-ցեմենտ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03012933) 2011 թվականի մայիսի 10-ին կնքված՝ N 32 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է փաթեթավորված պորտլանդցեմենտի մատակարարում՝ 1325000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԳԳՈՎ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
3 հունիսի 2011 թվականի N Մ- 383 -Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի N Մ-121-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՍԵՅՎ ԴԸ ՉԻԼԴՐԵՆ ՖԵԴԵՐԵՅՇՆ, ԻՆԿ.» ԱՄԵՐԻԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մայիսի 23-ի N 3/3.8-1/79127-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մայիսի 23-ի N ԱԱ/3-4/3302-11 եզրակացությունները, **ո թ ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, ինկ.» ամերիկյան բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 28-ի «Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, ինկ.» ամերիկյան բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Վաղ մանկության զարգացում» N Մ-121-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝


—1) «Վիմպերգ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06939009) 2011 թվականի մայիսի 11-ին կնքված՝ N ECD-03/2011 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Լոռու մարզի Վանաձոր համայնքի թիվ 2 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքների իրականացում՝ 20000000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Մ. Լամբարյան» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06800406) 2011 թվականի մայիսի 6-ին կնքված՝ N ECD-02/2011 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Լոռու

մարզի Սպիտակ համայնքի թիվ 2 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքների իրականացում՝ 22000000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Դիլիմաք» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 07609683) 2011 թվականի մայիսի 5-ին կնքված՝ N ECD-01/2011 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Տավուշի մարզի Դիլիջան համայնքի թիվ 12 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքների իրականացում՝ 19000000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 հունիսի 2011 թվականի N Մ- 384 -Ա
քաղ. երևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի N Մ-120-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՍԵՅՎ ԴԸ ՉԻԼԴՐԵՆ ՖԵԴԵՐԵՅՇՆ, ԻՆԿ.» ԱՄԵՐԻԿՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ) (N 2)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մայիսի 25-ի N 3/3.8-1/3378-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մայիսի 26-ի N ԱԱ/3-4/79336 -11 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, ինկ.» ամերիկյան բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 28-ի «Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, ինկ.» ամերիկյան բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Նախաձեռնություն հանուն երեխայի առողջության և կրթության» ծրագրի մասին» N Մ-120-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Սոս Թորոյան» ԱԶ-ի հետ (ՀՎՀՀ՝ 45109431) 2011 թվականի մայիսի 18-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է արժույթի մատակարարում՝ 372000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 հունիսի 2011 թվականի N Մ- 385 -ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի N Մ-120-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՍԵՅՎ ԴԸ ՉԻԼԴՐԵՆ ՖԵԴԵՐԵՅՇՆ,
ԻՆԿ.» ԱՄԵՐԻԿՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ) (N 1)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մայիսի 27-ի N 3/3.8-1/79376-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մայիսի 27-ի N ԱԱ/3-4/3439-11 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, ինկ.» ամերիկյան բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 28-ի «Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, ինկ.» ամերիկյան բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Նախաձեռնություն հանուն երեխայի առողջության և կրթության» ծրագրի մասին» N Մ-120-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Բարսիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02230504) 2011 թվականի մայիսի 19-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նշված ապրանքների մատակարարում՝ 779316 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱԿ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 հունիսի 2011 թվականի N Մ- 386 -Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի N Մ-120-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՍԵՅՎ ԴԸ ՉԻԼԴՐԵՆ ՖԵԴԵՐԵՅՇՆ,
ԻՆԿ.» ԱՄԵՐԻԿՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մայիսի 25-ի N 3/3.8-1/79233-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մայիսի 23-ի N ԱԱ/3-4/3304-11 եզրակացությունները, **ո թ ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, ինկ.» ամերիկյան բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 28-ի «Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, ինկ.» ամերիկյան բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Նախաձեռնություն հանուն երեխայի առողջության և կրթության» ծրագրի մասին» N Մ-120-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ագաթ-777» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01807983) 2011 թվականի մայիսի 13-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կահույքի պատրաստում և տեղափոխում՝ 1679200 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱԿ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
3 հունիսի 2011 թվականի N Մ- 387 -Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի N Մ-262-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՄԱՏԵՆԱՊԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ) (N 2)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մայիսի 27-ի N 3/3.8-1/79409-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մայիսի 27-ի N ԱԱ/3-4/3437-11 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Մատենադարան» հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի «Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին (4-րդ փուլ)» N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Շեն Կոնցեռն» ՓԲԸ-ի (ՀՎՀՀ՝ 02201344) ու «Ալբերտ Կարախանյան և որդիներ ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00441423) հետ 2011 թվականի մայիսի 15-ին կնքված՝ N 13/Ս պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նոր մասնաշենքի համար ներկայնյութերի մատակարարում՝ 6079585 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 մայիսի 2011 թվականի N Մ- 388 -Ա
քաղ. երևան


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 30-Ի N Մ-262-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՄԱՏԵՆԱՊԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ) (N 1)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մայիսի 20-ի N 3/3.8-1/79116-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մայիսի 19-ի N ԱԱ/3-4/3201-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Մատենադարան» հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի «Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին (4-րդ փուլ)» N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00067177) 2011 թվականի մայիսի 2-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պաշտպանիչ ահազանգման համակարգի լրացուցիչ մոնտաժային աշխատանքների իրականացում՝ 1312419 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
3 հունիսի 2011 թվականի N Մ- 389 -Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի N Մ-262-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՄԱՏԵՆԱՂԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մայիսի 11-ի N 3/3.8-1/78665-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մայիսի 16 -ի N ԱԱ/3-4/3072-11 եզրակացությունները, **ո թ ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Մատենադարան» հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի «Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին (4-րդ փուլ)» N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Գաջեգործ» ՓԲԸ-ի (ՀՎՀՀ՝ 00405114) ու «Ալբերտ Կարախանյան և որդիներ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00441423) հետ 2011 թվականի ապրիլի 29-ին կնքված N 12/Մ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նոր մասնաշենքի համար գիպսաստվարաթղթե թերթիկների և ցինկապատ պրոֆիլների մատակարարում՝ 6043400 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
3 հունիսի 2010 թվականի N Մ- 390-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-904-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱՍՏԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի մայիսի 25-ի N 3/3.8-1/79231-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի մայիսի 23-ի N ԱԱ/3-4/3298-10 գրությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի դեկտեմբերի 25-ի «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Պողոսյան կրթահամալիր» ծրագրի մասին» N Մ-904-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Էյ Ի Զի-Սերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00930884) 2010 թվականի մայիսի 12-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի մայիսի 12-ից մինչև 2012 թվականի մայիսի 12-ը գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկում՝ 86709 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Մ Ա Մ

3 հունիսի 2011 թվականի N Մ - 391 - Ա
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-092-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մայիսի 20-ի N 3/3.8-1/79101-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մայիսի 19-ի N ԱԱ/3-4/3202-11 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հեռուստամարաթոն - 2011» ծրագրի մասին» N Մ-092-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Տիգրան Մեծ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02505322) 2011 թվականի մայիսի 12-ին կնքված՝ N Ծ-07/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տպագրական աշխատանքների իրականացում՝ 4227000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ 

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ Մ Ա Մ

**3 հունիսի 2011 թվականի N Մ - 392 - Ա
քաղ. երևան**


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-Ի N Մ-170-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մայիսի 20-ի N 3/3.8-1/79100-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մայիսի 19-ի N ԱԱ/3-4/3206-11 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի մարտի 11-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք գյուղի նոր միջնակարգ դպրոցի կառուցման նախագծում» ծրագրի մասին» N Մ-170-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02524943) 2011 թվականի մայիսի 12-ին կնքված՝ N Փ-03/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննություն՝ 680000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ 

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
3 հունիսի 2011 թվականի N Մ - 393 - Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՈՒԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ
ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 3)

1. Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանում երեխաների հաղորդակցմանը արվեստի հետ, ինչը ներառում է անվճար ցուցադրության ներկայացում, առանձին արվեստանմուշների քննարկում, տեսաֆիլմի միջոցով արվեստագետի և նրա ստեղծագործական սկզբունքների հետ ծանոթացում, ապա տարբեր նյութերի /գունավոր և ինքնակաշուն թղթեր, մատիտներ, պլաստիկներ և այլն/ օգնությամբ ինքնուրույն ստեղծագործելու խթանում, ինչպես նաև Թանգարանային վարվեցողության կանոնների հետ ծանոթացում:
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3. Բարեգործը	«Գաֆեւեան Թանգարան» հիմնադրամ հասցե՝ ք. Երևան, Կասկադ համալիր ՀՎՀՀ՝ 02562304
4. Ծրագիրը կատարողը	«Գաֆեւեան Թանգարան» հիմնադրամ հասցե՝ ք. Երևան, Կասկադ համալիր ՀՎՀՀ՝ 02562304
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագիրն իրականացվում է ՀՀ Երևան քաղաքի Կասկադ համալիրի տարածքում՝ մշակույթի և արվեստի բնագավառ:
6. Ծրագրի բյուջեն	Ծրագրի ֆինանսավորումը կատարվում է «Գաֆեւեան Թանգարան» հիմնադրամի միջոցներով: Ընդհանուր բյուջեն 1 տարվա համար կազմում է 3,690,000 ՀՀ դրամ:
7. Բարեգործություն ստացողը	Ծրագրի շահառուներն են՝ 6-ից 12 տարեկան երեխաները, որոնք ուղղակիորեն կօգտվեն ծրագրից: Ծրագիրը բաց կլինի նաև բոլոր շահառուների համար, որոնք ինքնուրույն, դպրոցների կամ ծնողների միջոցով հետաքրքրություն կցուցաբերեն ծրագրի շրջանակներում մատուցվող կրթական գործունեությանը մասնակցելու նկատմամբ:

8. Ծրագրի իրականացման տևողությունը	Սկիզբ՝ 2011թ. մայիս, վերջնաժամկետ՝ 2012թ. մայիս:
9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	<ol style="list-style-type: none"> 1. Ծրագիրն անց է կացվում շաբաթական երկու անգամ, երեքշաբթի օրերին դպրոցականների համար ուսուցիչների ուղեկցությամբ, իսկ շաբաթ օրերին՝ ծնողների: 2. Դպրոցական այցի ժամանակ /շաբաթական 1 անգամ/ երեխաների տեղափոխություն՝ 1, 040,000 ՀՀ դրամ, 3. Ստեղծագործական մաս /շաբաթական 2 անգամ/ 40-60 դուպլե՝ 1,820,000 ՀՀ դրամ, 4. Տեսաֆիլմերի պատրաստում՝ 350,000 ՀՀ դրամ, 5. Նյութեր և բուկլետների տպագրություն՝ 480,000 ՀՀ դրամ:
10. Զեռք բերելի (ներմուծելի) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագրի, ծավալների և նախատեսվող գինը	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել (ներմուծել) հետևյալ ապրանքները և ծառայությունները՝ <ol style="list-style-type: none"> 1. Ստեղծագործական մասի համար նախատեսված նյութերի /գունավոր թղթեր, ինքնակաշուն թղթեր, պլաստիկներ, պլաստիլին, մկրատ, սրիչ, ռետին, քանոն և այլն/ ձեռքբերում՝ 1,820,000 ՀՀ դրամ, 2. Դպրոցական դասարանների տեղափոխման տրանսպորտային ծախսերի փոխհատուցում՝ 1,040,000 ՀՀ դրամ, 3. Տեսաֆիլմի պատրաստում և բուկլետների, նյութերի տպագրություն՝ 830,000 ՀՀ դրամ:
11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Ծրագրի շրջանակներում կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում:
12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	«Գաֆեւեան Թանգարան» հիմնադրամը համագործակցելու է բոլոր ցանկացող անձանց հետ՝ այն կազմակերպությունների և անհատների հետ, ովքեր կցանկանան օժանդակել այս ծրագրի իրագործմանը:
13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագիրը կնշակի իր գործունեության արդյունավետության գնահատման ներքին հսկողության համակարգ և պարբերաբար աուդիտի կենթարկվի անկախ աուդիտորի կողմից: Սահմանված կարգով ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով է ներկայացվում տեղեկատվություն ծրագրի իրականացման վերաբերյալ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 հունիսի 2011 թվականի N Մ- 406-Ա
քաղ. երևան

ՄԱՅՐ ԱԹՈՐ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ԵՐԵՄՅԱՆ ԽՅԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հունիսի 3-ի N 3/3.8-1/79776-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի ապրիլի 29-ի N 2527-11, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2011 թվականի ապրիլի 29-ի N 027/12542911, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության 2011 թվականի մայիսի 2-ի N 05/301/1792-11 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի ապրիլի 29-ի N ԱԱ/3-4/2623 -11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 692 147 830 դրամ արժողությամբ «Երեմյան խցերի վերանորոգման» ծրագիրը (կցվում է):
2. Սահմանել, որ Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի կողմից (ՀՎՀՀ՝ 04703401) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝ «Շիրակ Ինժեներինգ Քոնստրաքշն» ՓԲԸ-ի հետ (ՀՀ Շիրակի մարզ, քաղ. Գյումրի, Մուսաբեյյան 76ա, բն.12 ՀՎՀՀ՝ 05531764) 2011 թվականի ապրիլի 7-ին կնքված N 03Ծ/011 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի Երեմյան խցերի վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 692 147 830 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:
3. Մայր Աթոռ սուրբ Էջմիածնին՝
 - 1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի

պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշման ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե, Արմավիրի մարզպետարան և Վաղարշապատի քաղաքապետարան:



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ




Երեմյան խցերի վերանորոգման
 Ծ Ր Ա Վ Ի Ր

1	Ծրագրի նպատակը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Երեմյան խցերի հիմնանորոգում և ամրացում
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակները	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից:
3	Բարեգործը (բարեգործները)	Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն
4	Ծրագրի կատարողը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ԳՎՀԳ 04703401
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածք
6	Ծրագրի բյուջեն	692 147 830 ՀՀ դրամ:
7	Բարեգործություն ստացողը	Մայր Աթոռը և միաբանները:
8	Ծրագրի իրականացման տևողությունը	25 մայիսի 2011թ. – 31 մայիսի 2013թ.:
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է Երեմյան խցերի վերանորոգում՝ 692 147 830 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: Վերանորոգման աշխատանքներն իրականացվում են «Շիրակ Ինժեներինգ Քոնստրաքշն» ՓԲԸ-ի կողմից (ՀՀ, Շիրակի մարզ, ք.Գյումրի, Մուսայեյան 76ա, բն. 12, ԳՎՀԳ 05531764), պայմանագիր քիվ 03Ը/011, կնքված 07.04.2011թ.:
10	Չեղբ բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Նախատեսվում է Երեմյան խցերի հիմնանորոգում, հիմքերի ամրացում և ջրամեկուսացում, ներքին հարդարում, տանիքի նորոգում՝ 692 147 830 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ:
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Այլ ծախսեր նախատեսված չեն
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն ՀՀ քաղաքաշինության նախարարության, Մշակույթի նախարարության, Արմավիրի մարզպետարանի և Վաղարշապատ քաղաքի քաղաքապետարանի հետ:
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Յուրաքանչյուր եռամսյակ հանձնաժողովին կներկայացվեն ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների մասին տեղեկություններ, ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն:

Գլխավոր ճարտարապետ՝
 Արտավազդ Նազարբեյլյան

Ֆինանսական բաժնի տնօրեն
 Մարինե Ղազարյան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
3 հունիսի 2011 թվականի N Մ - **407** - Ա
քաղ. Երևան

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՐՄԻՑ ԻՐԱՎԱՆԱՑ-
ՎՈՂ «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ
ՇՐՋԱՆԻ ԳԻՇԻ ԳՅՈՒՂԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԴՊՐՈՑԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ»
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մայիսի 25-ի N 3/3.8-1/79232-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի մայիսի 20-ի N 3013-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մայիսի 23-ի N 3/3-4/3300-11 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 29853500 դրամ ընդհանուր արժողությամբ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Գիշի գյուղի նորակառուց գյուղացի կահավորում» ծրագիրը (կցվում է):


2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2011 թվականի մայիսի 16-ին կնքված՝ N ԼՂ-Կ-05/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կահույքի պատրաստում և տեղադրում՝ 29853500 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության

կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն

Արա Վարդանյան



«18» մայիսի 2011թ.

«ԼՂՀ Մարտունու շրջանի Գիշի գյուղի նորակառույց դպրոցի կահավորում»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Ամբողջովին կահավորել Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Գիշի գյուղի 300 աշակերտի համար նախատեսված նորակառույց դպրոցը
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Լեռնային Ղարաբաղ, Մարտունու շրջանի Գիշի գյուղ, կրթության բնագավառ
5.	Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 29.853.500,00 դրամ: 2/4

2

6.	Բարեգործություն ստացողը	Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Գիշի գյուղի նորակառույց դպրոցը
7.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2011 մայիսի 16-ից մինչև 2011թ. հոկտեմբերի 16-ը:
8.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում
9.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«ՀԱՏԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրի Հավելված N1-ի ցանկի համաձայն գույքի պատրաստում, գնում, տեղափոխում եւ անհատույց տեղադրում՝ 29.853.500,00 դրամ առանց ԱԱՀ-ի:
10.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
11.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Կախատեսվում է համագործակցություն ԼՂՀ կրթության և գիտության նախարարության հետ:
12.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամիսի հաշվետվություններ):

Ներկայացրեց գործադիր տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը

2/4



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՆԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
3 հունիսի 2011 թվականի N Մ - 408 - Ա
քաղ. երևան

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՎԱՆԱՅՎՈՂ «ԼԵՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆԻ ՎԱՂՈՒՀԱՍ ԳՅՈՒՂԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԴՊՐՈՑԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մայիսի 25-ի N 3/3.8-1/79230-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի մայիսի 20-ի N 3020-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մայիսի 23-ի N 3/3-4/3299-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 21952900 դրամ ընդհանուր արժողությամբ «Լենային Ղարաքաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղի նորակառույց դպրոցի կահավորում» ծրագիրը (կցվում է):


2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

«ՀԱՏԱ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2011 թվականի մայիսի 16-ին կնքված՝ N ԼԴ-Կ-04/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կահույքի պատրաստում և տեղադրում՝ 21952900 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության

կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշման ուղարկել Լենային Ղարաքաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն

Արա Վարդանյան



«18» մայիսի 2011թ.

«ԼՂՀ Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղի նորակառույց դպրոցի կահավորում»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Ամբողջովին կահավորել Լեռնային Ղարաբաղի Վաղուհաս գյուղի 260 աշակերտի համար նախատեսված նորակառույց դպրոցը
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Լեռնային Ղարաբաղ, Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղ, կրթության բնագավառ
5.	Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 21.952.900,00 դրամ: T/A

2

6.	Բարեգործություն ստացողը	Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղի նորակառույց դպրոցը
7.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2011 մայիսի 16-ից մինչև 2011թ. հոկտեմբերի 16-ը:
8.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում
9.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրի Հավելված N1-ի ցանկի համաձայն գույքի պատրաստում, գնում, տեղափոխում եւ անհատույց տեղադրում՝ 21.952.900,00 դրամ առանց ԱԱՀ-ի:
10.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
11.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն ԼՂՀ կրթության և գիտության նախարարության հետ:
12.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ):

Ներկայացրեց գործադիր տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը

T/A



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
3 հունիսի 2011 թվականի N Մ- 409-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՅՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ,
ԿՈՎԿԱՍԻ ԲԵՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՄՆԻ ԵՎ «ՇԻԿԱՀՈՂ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼՈՑ»
ՊՈԱԿ-Ի ՄԻՋԵՎ 04.03.2011 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՆՔՎԱԾ ԴՐԱՄԱՇԵՆՈՐԸՑԻ ՊԱՅՄԱ-
ՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ 2011 ԹՎԱԿԱՆԻ»
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2011 թվականի մայիսի 12-ի N 1/01/10863-11 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մայիսի 18-ի N 3/3.8-1/53363-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի մայիսի 16-ի N 2882-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մայիսի 16-ի N ԱԱ/3-4/3075-11, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2011 թվականի մայիսի 18-ի N 01/2132-11 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակելի Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից իրականացվող՝ 20000000 դրամ ընդհանուր արժեքով «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Շիկահող» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 04.03.2011 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2011 թվականի» ծրագիրը (կցվում է):


2. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն՝ ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-

ման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ու Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին:



Ա. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ



Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ս Է

ՀՀ Բնապահպանության նախարարության
աշխատակազմի ղեկավարի կողմից
Է. Փիրումյան
“ 11 ” մայիսի 2011թ.

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀՀ բնապահպանության նախարարության, Կովկասի Բնության Հիմնադրամի և «Շիկահող» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև
04.03.2011թ. կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2011 թվականի

1. Ծրագրի նպատակը	«Շիկահող» պետական արգելոցում իրականացվելիք միջոցառումների ֆինանսավորման ծավալների (բյուջեի) համալրում նպատակադրված պետական արգելոցի պահպանության բարելավմանը ինչպես նաև «Շիկահող» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի կանոնադրական ինդիկսների ամփոփումով կատարմանը
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի շրջանակներում ծրեցրով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3. Բարեգործը	Կովկասի Բնության Հիմնադրամ, Թուրքմենհոֆստրասսե 18, 63067 Օֆֆենբախ, Գերմանիա
4. Ծրագիրը կատարողը	ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմ
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Սյունիքի մարզ, գ.Շիկահող «Բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանություն»
6. Ծրագրի բյուջեն	Կովկասի Բնության Հիմնադրամից ստացվելիք դրամական միջոցները մուտքագրվելու են «Շիկահող» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի համար «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ում բացված հատուկ հաշվում 20 000,0 հազ.դրամ : Ծախսերի ուղղությունները և չափերը ըստ կետ

1/3

	10-ի:
7. Բարեգործություն ստացողը	«Շիկահող» պետական արգելոց» ՊՈԱԿ, Սյունիքի մարզ, գ.Շիկահող
8. Ծրագրի իրականացման տևողությունը	01.05.2011թ. - 31.12.2011թ.
9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	ՀՀ բնապահպանության նախարարության, Կովկասի Բնության Հիմնադրամի և «Շիկահող» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 04.03.2011թ. կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2011 թվականի ծրագիր՝ 01.05.2011թ. - 31.12.2011թ. - 20000,0 հազ.դրամ ըստ կցված նախահաշիվների և անվանացանկերի՝ 1. «Շիկահող» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի անձնակազմի լրացուցիչ վարձատրություն (խրախուսում) - 14 800,0 հազ.դրամ , 2. Վարչական սարքավորումների ձեռքբերում - 1 266,0 հազ.դրամ 3. Առավել վտանգավոր գոտիներում շուրջօրյա հերթապահությունների և շտրջկալների իրականացման համար լրացուցիչ վառելանյութի հատկացում - 1 800,0 հազ.դրամ 4. Ավտոտեխսպասարկում - 1 150,0 հազ.դրամ , 5. Գրասենյակային նյութերի ձեռքբերում - 144,0 հազ.դրամ , 6. Կապի, էներգետիկ և այլ ծառայությունների գծով ծախսերի ֆինանսավորում - 840,0 հազ.դրամ :
10. Զեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. «Շիկահող» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի անձնակազմի վարձատրություն և լրացուցիչ վարձատրություն (խրախուսում) - 14 800,0 հազ.դրամ , 2. Վարչական սարքավորումների ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) - 1266,0 հազ.դրամ 3. Առավել վտանգավոր գոտիներում շուրջօրյա հերթապահությունների և շտրջկալների իրականացման համար լրացուցիչ վառելանյութի հատկացում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված

Ա. Գրիգորյան

2/3

		<p>արժեքի հարկի վճարումից ազատում) - 1800,0 հազ.դրամ</p> <p>4. Ավտոտեխսպասարկում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) - 1150.0 հազ.դրամ,</p> <p>5. Գրասենյակային նյութերի ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) - 114,0 հազ.դրամ,</p> <p>6. Կապի, էներգետիկ և այլ ծառայությունների գծով ծախսերի ֆինանսավորում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում)- 840.0 հազ.դրամ:</p>
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Բոլոր ծախսերն ուղղված են շահառուներին: Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	«Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի և «Սյունիքի մարզպետարանի հետ
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հաշվետվություն է ներկայացվում բարեգործին, ինչպես նաև սահմանված կարգով տեղեկատվություն է ներկայացվում «Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին և «Ընկապակապակության նախարարությանը

7/3

Ա. Բալասանյան



U

ՄԱՍԻՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՆԱԽԱՀԱՆԻԿ
 2011 թվականի ընթացքում Կովկասի Բաղրթան Հրեմատրակի միջոցների հաշվին կատարվելիք
 «Շիվանդ» ՊՍԸ ՊՈՍԿ

7/3

Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հորիզոնների	Չափի միավորը	Անոթք քանակը (ծավալը)	Շտրիհաձող գումարը (հազար դրամով)
1	2	3	4
1 Կարգավան սարքավորումների ձեռքբերում			
1	հատ	2	360.0
2	հատ	2	140.0
3	հատ	2	66.0
4	հատ	2	200.0
5	հատ	1	500.0
Շտրիհաձող վարչական սարքավորումներ			1266.0
1	կար	1750	700.0
2	կար	1714	600.0
3	կմ	2500	500.0
4	դրամ	1	1000.0
5	դրամ	1	150.0
Շրջանային սարքավորումներ			2950.0
5	վարչական ծախսեր		
Գրանցվածքային տրոհումներ և դրամային			144.0
1	այդ բժիշկ ռատ ստանձնելու ապրանքների	դրամ	144.0
Ծրայունություններ			840.0
1	այդ բժիշկ ռատ ստանձնելու ծառայությունների	դրամ	160.0
2	Բժական գագի մատակարարման	դրամ	200.0
3	ձառառառաններ	դրամ	40.0
4	Կապի ծառայություններ	դրամ	240.0
5	Բանկային ծառայություններ	դրամ	200.0
Շրջանային վարչական ծախսեր			984.0
ԸՆԴՀԱՆՈՒՄ ԿՐԻՄԱՆԱԿԱՆ ԳՆԱԿՆԵՐ			3200.0
ԸՆԴՀԱՆՈՒՄ ԿՐԻՄԱՆԱԿԱՆ ԳՆԱԿՆԵՐ			1980.0
ԸՆԴՀԱՆՈՒՄ ԿՐԻՄԱՆԱԿԱՆ ԳՆԱԿՆԵՐ			2000.0

U



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
3 հունիսի 2011 թվականի N Մ- 410
քաղ. երևան

ՀԱՅԱՅՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ,
ԿՈՎԿԱՍԻ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ «ԱՐԵՎԻԿ» ԱԶԳԱՅԻՆ ՊՈԱԿ-Ի
ՄԻՋԵՎ 04.03.2011 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՆՔՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

ման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշման ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին:



Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2011 թվականի մայիսի 12-ի N 1/01/10876-11 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մայիսի 18-ի N 3/3.8-1/79007-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի մայիսի 16-ի N 2900-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մայիսի 16-ի N ԱԱ/3-4/3076-11, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2011 թվականի մայիսի 18-ի N 01/2133-11 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից իրականացվող՝ 12500000 դրամ ընդհանուր արժեքով «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Արևիկ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 04.03.2011 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող» ծրագիրը (կցվում է):
2. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությանը՝
 - 1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն՝ ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.
 - 2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-



Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ս Է

ՀՀ Քրեական Կոդեքսի Կոմիտեի նախարարության
Կրեմլի Կոմիտեի գեկվարի կողմից
Է. Փիրումյան
"11" մայիսի 2011թ.

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ՀՀ քննապահականության նախարարության, Կովկասի Բնության Հիմնադրամի և «Արևիկ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև
04.03.2011թ. կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող

1.	Ծրագրի նպատակը	«Արևիկ» ազգային պարկում իրականացվելիք միջոցառումների ֆինանսավորման ծավալների (բյուջեի) համարում՝ նպատակատարված ազգային պարկի Կոմիտեի և Բնության Կոմիտեի բարելավմանը
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի շրջանակներում ծրագրով սահմանված կարգով օգտվել հարկազան արտոնություններից
3.	Բարեգործը	Կովկասի Բնության Հիմնադրամ, Թուլայենիոֆստրաստե 18, 63067 Օսկենսկոյ, Ռուսաստան
4.	Ծրագիրը կատարողը	«ՀՀ քննապահականության նախարարության աշխատակազմ
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	«Արևիկ» ազգային պարկ» ՊՈԱԿ: «Բնության հիմնով պահպանվող տարածքների պահպանություն»
6.	Ծրագրի բյուջեն	Կովկասի Բնության Հիմնադրամից ստացվելիք դրամական միջոցները մուտքագրվելու են «Արևիկ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից «Արևիկ» ՔՊՄԿ-ի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ում բացված հատուկ հաշվում: 12 500.0 հազ.դրամ: Ծախսերի ուղղությունները և չափերը ըստ կետ 10-ի:
7.	Բարեգործություն ստացողը	«ՀՀ Սյունիքի մարզի բնակչություն, «Արևիկ» ազգային պարկ» ՊՈԱԿ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	01.05.2010թ. – 31.12.2011թ.
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները,	«ՀՀ քննապահականության նախարարության, Կովկասի Բնության

Handwritten signature

7/4

անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Հիմնադրամի և «Արևիկ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 2011թ. կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2011 թվականի ծրագիր՝ 01.05.2011թ. – 31.12.2011թ. – 12500.0 հազ.դրամ ըստ կցված նախահաշիվների և անվանացանկերի՝ 1. Դաշտային սարքավորումների ձեռքբերում – 550.0 հազ.դրամ, 2. Պահպանության աշխատանքներ - 730.0 հազ.դրամ, 3. Գիտահետազոտական և մոնիթորինգի աշխատանքներ - 300.0 հազ.դրամ, 4. Ավտոտեխսպասարկում - 2640.0 հազ.դրամ, 5. Վարչական ծախսեր - 1190.0 հազ.դրամ, 6. «Արևիկ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի անձնակազմի լրացուցուցիչ վարձատրություն (խրախուսում) – 7090.0 հազ.դրամ:
10. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. Դաշտային սարքավորումների ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) – 550.0 հազ.դրամ, 2. Պահպանության աշխատանքներ (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) - 730.0 հազ.դրամ, 3. Գիտահետազոտական և մոնիթորինգի աշխատանքներ (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) - 300.0 հազ.դրամ, 4. Ավտոտեխսպասարկում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) - 2640.0 հազ.դրամ, 5. Վարչական ծախսեր (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) - 1190.0 հազ.դրամ,

Handwritten signature

7/4



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Շ ՈՒ Մ
3 հունիսի 2011 թվականի N Մ-411-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՅՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ,
ԿՈՎԿԱՍԻ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ «ԽՈՍՐՈՎԻ ԱՆՏԱՈՒ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵ-
ԼՈՑ» ՊՈԱԿ-Ի ՄԻՋԵՎ 12.02.2010 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԵՔՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՊԱՅՄԱ-
ՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-
կարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպա-
նության նախարարության 2011 թվականի մայիսի 12-ի N 1/01/10863-11 և մայիսի 16-ի N 1/01/
10900-11 գրությունները և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության
2011 թվականի մայիսի 20-ի N 3/3.8-1/79117-11, Հայաստանի Հանրապետության արդարա-
դատության նախարարության 2011 թվականի մայիսի 20-ի N 3011-11, Հայաստանի Հանրա-
պետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի
մայիսի 19-ի N ԱԱ/3-4/3205-11, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2011
թվականի մայիսի 20-ի N 1/15/2127-11 եզրակացությունները, որոշում է:

1. Բարեգործական որակել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նա-
խարարության կողմից իրականացվող՝ 48061500 դրամ ընդհանուր արժեքով «Հայաստանի
Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրա-
մի և «խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 12.02.2010 թվականին կնք-
ված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2011 թվականի» ծրա-
գիրը (կցվում է):


2. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատա-
կարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճեն-
ները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրա-
գրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի դրույթների համաձայն՝ ավելացված արժեքի հարկից ազատվող
ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով
Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-

ման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված
ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մա-
տակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավար-
տից հետո մեկամսյա ժամկետում՝ ամիսի տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշման ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաս-
տանի Հանրապետության բնապահպանության նախարարություն, Հայաստանի Հանրապե-
տության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի
Հանրապետության Արարատի մարզպետին:



Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ



Հ Ա Ս Տ Ա Տ Կ Ա Ծ Է

Հանրապետության նախարարության
անձնակազմի ղեկավարի կողմից
Է. Փիրումյան
"10" մայիսի 2011թ.

Ծ Ր Ա Գ Ի Ր

«Հանրապետության նախարարության, Կովկասի Բնության Հիմնադրամի և «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 12.02.2010թ. կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2011 թվականի

1. Ծրագրի նպատակը	«Խոսրովի անտառ» պետական արգելոցում իրականացվելիք միջոցառումների ֆինանսավորման ծավալների (բյուջեի) համալրում՝ նպատակաուղղված պետական արգելոցի պահպանության բարելավմանը, ինչպես նաև «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի կանոնադրական խնդիրների ավելի արդյունավետ կատարմանը
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3. Բարեգործը	Կովկասի Բնության Հիմնադրամ, Թուլպենինոֆստրաստ 18, 63067 ՕՖՖենբախ, Գերմանիա
4. Ծրագիրը կատարողը	«Հանրապետության նախարարության աշխատակազմ»
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Արարատի մարզ, ք.Վեդի «Բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանություն»
6. Ծրագրի բյուջեն	Կովկասի Բնության Հիմնադրամից ստացվելիք դրամական միջոցները մուտքագրվելու են «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի համար «Էյ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ում բացված հատուկ

Handwritten signature

7/5


	հաշվում՝ 48 061.5 հազ.դրամ): Ծախսերի ուղղությունները և չափերը ըստ կետ 10-ի:
7. Բարեգործություն ստացողը	«Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ, Արարատի մարզ, ք.Վեդի
8. Ծրագրի իրականացման տևողությունը	01.05.2011թ. – 31.12.2011թ.
9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	«Հանրապետության նախարարության, Կովկասի Բնության Հիմնադրամի և «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 12.02.2010թ. կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2011 թվականի ծրագիր՝ 01.05.2011թ. – 31.12.2011թ. – 48 061.5 հազ.դրամ ըստ կցված նախահաշիվների և անվանացանկերի՝ 1. «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի անձնակազմի վարձատրություն և լրացուցիչ վարձատրություն (խրախուսում) – 25160.0 հազ.դրամ, 2. Խոսրովի այցելուների կենտրոնի համար կահույքի, սարքավորումների և այլ գույքի ձեռքբերում – 9000.0 հազ.դրամ 3. Առավել վտանգավոր գոտիներում շուրջօրյա հերթապահությունների և շուրջկալների իրականացման համար լրացուցիչ վառելանյութի հատկացում – 3001.5 հազ.դրամ 4. Ավտոտեխսպասարկում – 3400.0 հազ.դրամ, 5. Արգելոցում էկոլոգոսաշրջության ենթակառուցվածքների ստեղծում (կառուցում) – 4000,0 հազ.դրամ, 6. Կապի և էներգետիկ ծառայությունների գծով ծախսերի ֆինանսավորում – 3500.0 հազ.դրամ:
10. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի անձնակազմի վարձատրություն և լրացուցիչ վարձատրություն (խրախուսում) – 25160.0 հազ.դրամ, 2. Խոսրովի այցելուների կենտրոնի համար կահույքի,

Handwritten signature

7/5

		<p>սարքավորումների և այլ գույքի ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) - 9000.0 հազ.դրամ</p> <p>3. Առավել վտանգավոր գոտիներում շուրջօրյա հերթապահությունների և շուրջկալների իրականացման համար լրացուցիչ վառելանյութի հատկացում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) - 3001.5 հազ.դրամ</p> <p>4. Ավտոտեխսպասարկում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) - 3400.0 հազ.դրամ,</p> <p>5. Արգելոցում էկոգրոսաշրջության ենթակառուցվածքների ստեղծում (կառուցում)(գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) - 4000,0 հազ.դրամ,</p> <p>6. Կապի և էներգետիկ ծառայությունների գծով ծախսերի ֆինանսավորում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում)- 3500.0 հազ.դրամ:</p>
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Բոլոր ծախսերն ուղղված են շահառուներին: Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	<< կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի և << Արարատի մարզպետարանի հետ
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հաշվետվություն է ներկայացվում բարեգործին, ինչպես նաև սահմանված կարգով տեղեկատվություն է ներկայացվում << կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին և << բնապահպանության նախարարությանը

Արթուրյան




A/5

ԾԱՆՍԵՐԻ ԱՄՓՈՓ ՆԱԽԱՀԱՇԻՎ
 2011 թվականի ընթացքում Կովկասի Բլոկի Ընդհանուր Հրահրման Կոմիտեի Կողմից
 «Խոտորված անջրտակ» պետական արգելոց» ԴՊԱԿ
 կատարվելիս

Գծանման ենթակա սարքավորումների, աշխատանքների և ծառայությունների ցուցակային ծախսերի տեսակագիտական անվանումները	Չափի միավորը	Անցողք քանակը (ծախսը)	Ընդհանուր գումարը (հազար դրամով)
1	2	3	4
1	3	4	5
Կոտորված անջրտակի կետորով համար կտիտքի, սարքավորումների և այլ գույքի ձեռքբերում			
Գումարակազմի նյութեր և հազարաչափ			
այլ թվում՝ ըստ ստանդին սարքավորումների ծառայությունների և աշխատանքների			105.0
1	գույք	16	15.0
2	հասար	16	90.0
Կենցաղային և հանրային գնումի նյութեր			
այլ թվում՝ ըստ ստանդին սարքավորումների ծառայությունների և աշխատանքների			15.0
1	Օճառ	150	15.0
Հնարավոր փոխարինումի նյութեր			
այլ թվում՝ ըստ ստանդին սարքավորումների ծառայությունների և աշխատանքների			5735.0
1	Ալյուսալ (սպին)	144	120.0
2	Կաթածեղ, բալսածեղ	2	60.0
3	Անվտանգիչ սպրեյ	24	170.0
4	Սոքե	24	75.0
5	Սոքե խոնավալիս	60	80.0
6	Սնկոց սերունի	48	250.0
Կարգավորում արգելոցում			
այլ թվում՝ ըստ ստանդին սարքավորումների ծառայությունների և աշխատանքների			5735.0
1	Համակարգիչ	1	170.0
2	Մոնիտոր	1	70.0
3	Սնկոցի սնուցման սարք	1	20.0
4	Մահակայ	8	640.0
5	Պահարան փոթ (տոմբա)	8	200.0
6	Ջեռատապահարան	5	400.0
7	Տրոսեր	4	120.0
8	Լուսամոմի	4	40.0
9	Ընդունակազատ	70	280.0
10	Սնունդ սղման	6	150.0

A/5

11	Սեղան ճաշասենյակի	հատ	12	660.0
12	Սեղան մատուցողի	հատ	5	100.0
13	Սեղան հնարձ փայտյա	հատ	4	240.0
14	Լրացրասեղան	հատ	2	40.0
15	Սեղան արդուկի	հատ	1	20.0
16	Գրասեղան	հատ	2	50.0
17	Վաճառասեղան (բառի)	հատ	2	150.0
18	Աթոռ	հատ	60	900.0
19	Աթոռ հնարձ փայտյա	հատ	16	320.0
20	Բազկաթոռ	հատ	5	175.0
21	Բազմոց	լրակազմ	2	440.0
22	Կահույք փայտյա	հատ	2	50.0
23	Կահույք խոհանոցի	լրակազմ	1	500.0
Այլ մեքենաներ և սարքավորումներ				2390.0
այդ թվում՝ ըստ առանձին ապրանքների, ծառայությունների և աշխատանքների				
1	Սրճարանի ծածկ	հատ	1	40.0
2	Կինոպրոյեկտոր	հատ	1	447.0
3	Օդափոխման համակարգ խոհանոցի	հատ	1	120.0
4	Շողոտազույգ մեծ	հատ	1	400.0
5	Շողոտազույգ փոքր	հատ	2	100.0
6	DVD նվագարկիչ	հատ	2	50.0
7	Ալեհավաք	հատ	3	170.0
8	Տեսախցիկ	հատ	6	228.0
9	Սառնարան մեծ	հատ	1	220.0
10	Գազօջախ	հատ	1	180.0
11	Փոշեկոլ	հատ	2	60.0
12	Լվացքի մեքենա	հատ	1	230.0
13	Խմելու ջրի սառք	հատ	2	120.0
14	Լվացարան	հատ	1	25.0
Ընդամենը խոսրովի տուրիստական կենտրոնի համար կահույքի, սարքավորումների և այլ գույքի ձեռքբերում				9000.0
2	Առավել վտանգավոր գոտիներում շուրջօրյա հերթապահությունների և շուրջօրյաների իրականացման համար լրացուցիչ վառելանյութի			
Տրանսպորտային նյութեր				3001.5
այդ թվում՝ ըստ առանձին ապրանքների, ծառայությունների և աշխատանքների				
1	Բենզին <Ռեզոլյար>	լիտր	9095	3001.5
Ընդամենը վառելանյութի ձեռքբերում				3001.5
3	Ավտոսպասարկում			
Տրանսպորտային նյութեր				1900.0
1	Ղիզելային վառելիք	լիտր	1023	294.6
2	Շարժիչի յուղ (SG/CD 20W50) (5լ տարրա)	կգ	50	190.0
3	Շարժիչի յուղ (SG/CD 15W40) (5լ տարրա)	կգ	50	190.0
4	Արգելվածան հեղուկ (DOT-4)	լիտր	40	32.0
5	Հակասառիչ հեղուկ	լիտր	80	40.0
6	Օդաճնշական դոզեր (ձմեռային)	լրակազմ	12	600.0



7/5

7	Օդաճնշական դոզեր (համաձեղնալին)	լրակազմ	12	414.0
8	Կոտակիչներ 60A (ակումուլատոր)	հատ	2	60.4
9	Կոտակիչներ 75A (ակումուլատոր)	հատ	2	79.0
Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում				1500.0
այդ թվում՝ ըստ առանձին ապրանքների, ծառայությունների և աշխատանքների				
1	Մարդատար ավտոմեքենաների նորոգում (ընթացիկ, միջին, հիմնական)	հատ	2	500.0
2	Բեռնատար ավտոմեքենաների նորոգում (ընթացիկ, միջին, հիմնական)	հատ	4	1000.0
Ընդամենը ավտոտեխսպասարկում				3400.0
4	Արգելում էկոզոսաշրջության ենթակառուցվածքների ստեղծում			
Ենթակառուցվածքների շինարարություն				4000.0
այդ թվում՝				
1	Արգելում էկոզոսաշրջության ենթակառուցվածքների ստեղծում (կառուցում)	դրամ	1	4000.0
Ընդամենը ենթակառուցվածքների ստեղծում				4000.0
5	ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Էներգետիկ ծառայություններ				3000.0
այդ թվում՝ ըստ առանձին ապրանքների, ծառայությունների և աշխատանքների				
1	Գազամատակարարում	դրամ	1	321.8
2	Էլեկտրաէներգիա	դրամ	1	2678.2
Կոմունալ ծառայություններ				500.0
այդ թվում՝ ըստ առանձին ապրանքների, ծառայությունների և աշխատանքների				
1	Միջազգային և միջքաղաքային հեռախոսային կապի ծառայություններ	դրամ	1	500.0
Ընդամենը ծառայություններ				3500.0
Ընդամենը արձեղծում և ծառայություններ				22901.5
Ընդամենը արձեղծում և ծառայություններ				25160.0
Ընդամենը 2014 թվականի ծախսեր				48061.5

7/5



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
3 հունիսի 2011 թվականի N Մ-4/2-Ա
քաղ. երևան

ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԵՐԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿՈՐՊՈՐԱՑԻԱՅԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԿՈՐՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՄԱՔՈՒՐ
ԽՄԵԼՈՒ ԶՐԻ ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ» WE20110018 ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մայիսի 17-ի N 3/3.8-1/78923-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի մայիսի 16-ի N 2883-11, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության 2011 թվականի մայիսի 16-ի N 07/07.1/2948-11, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մայիսի 16-ի N ԱԱ/3-4/3077-11 և մայիսի 27-ի N Շ504-535E-CB45, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2011 թվականի մայիսի 13-ի N 01/10.1/1346-11, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2011 թվականի մայիսի 24-ի N 1/3/1-1/2208-11, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2011 թվականի մայիսի 18-ի N 01/101/104.3/2516-11, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2011 թվականի մայիսի 18-ի N 01/15/2015-11, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2011 թվականի մայիսի 16-ի N 01/10.1/1844-11 ու Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2011 թվականի մայիսի 17-ի N 01/04.3/2214-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է:**

1. Բարեգործական որակելի Վերջին օրերի սրբերի բարեգործական կորպորացիայի հայաստանյան ներկայացուցչության (ՀՀ, քաղ. Երևան, Մաշտոցի պողոտա 50ա, բն. 18, ՀՎՀՀ՝ 01526777) կողմից իրականացվող՝ 92322650 դրամ ընդհանուր արժեքով «Համայնքների մաքուր խմելու ջրի ջրամատակարարում» WE20110018 ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով Վերջին օրերի սրբերի բարեգործական կորպորացիայի հայաստանյան ներկայացուցչության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքներն անմիջականորեն կապված են նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝


1) «Վեդի Պլաստ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04109451) 2011 թվականի փետրվարի 22-ին կնքված՝ պայմանագրիում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի ապրիլի

30-ից մինչև օգոստոսի 15-ը ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության 15 համայնքներում խմելու ջրի ջրամատակարարման խողովակների մատակարարման, մոնտաժման և փորձարկման աշխատանքների իրականացում՝ 51389250 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

